ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հունիսի 2026 թվականի N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 24-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2027 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների Տաշիր համայնքի բնապահպանական վճարների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 22-ի N 57-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,

2. Հայստանի Հանրապետությաան Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N27-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,

4. Շարժական գույքը որպես նվիրատվություն ընդունելու առաջարկության մասին:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2026 հունիսի 24
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հունիսի 2026 թվականի N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 57-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 14-րդ կետերով, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թվականի օգոստոսի 24-ի N 1421-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 04-ի N 310-Ն հրամանով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, հաշվի առնելով, որ ներկայացված ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը որևէ դիտողություն և առարկություն չեն ներկայացրել՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2027 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների, Տաշիր համայնքի բնապահպանական վճարների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ համապատասխան փաթեթը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ուղարկել Լոռու մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2027 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների տաշիր համայնքի բնապահպանական վճարների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 57-Ա որոշումը:

Կողմ -12	Դեմ -0	Ձեռնպահ -3
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ		Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ		Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		Ի. ՏՈՄԵՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ		
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ		
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ		
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ		
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ		
Ա. ՍՈԼՈՅԱՆ		
Է. ՍՈՂՈՅԱՆ		
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2026 հունիսի 24
ք. Տաշիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Տաշիր համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 24-ի N 61-Ա որոշման

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հայտատու կազմակերպության անվանումը	*ՀՀ, Լոռու մարզ, Տաշիրի համայնքապետարան*
Կազմակերպության ղեկավարի անունը և կոնտակտային տվյալները (էլ. փոստ, հեռախոսահամար)	*Համայնքի ղեկավար Էդգար Արշակյան* *էլ. փոստ՝ tashirhamaynq@gmail.com* *Հեռախոս՝ (0254) 2-22-41*
Կոնտակտային անձի անունը և կոնտակտային տվյալները (էլ. փոստ, հեռախոսահամար), եթե տարբերվում է ղեկավարից	*Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ Աստղիկ Բարոյան* *էլ. փոստ՝ developmentprogramstashir@gmail.com* *Հեռ. +37494330476*

1. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Տաշիր համայնքը գտնվում է Լոռու մարզում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, ունի 30408 բնակիչ:

Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թվում է նաև Տաշիր համայնքը:

Համայնքի տարածքում ընկերության գործունեության հետևանքով ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի, մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման և արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրման կամ պահման բացասական ազեդեցությունը նվազեցնելու համար, անհրաժեշտություն է առաջացել մշակել բնապահպանական ծրագիր:

Առաջարկվող ծրագրի բնապահպանական նպատակն է նվազեցնել հողեղումների վտանգը և մաքրել համայնքի տարածքում առկա սելավատարները:

Առողջապահական ոլորտում նախատեսվում է իրականացնել մեծահասակների ֆիզիկական ակտիվությանը նպաստող ծրագիր:

Ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել բնապահպանական ծրագրերը և ներկա պահին այս ոլորտին առնչվող հրատապ լուծում պահանջող հարցերը:

Ծրագիրը նպատակ ունի իրականացնել Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրում գործող ջրատարների (սելավատարների և անձրևաջրերի հեռացման համակարգերի) մաքրման և վերականգնման համալիր աշխատանքներ: Տարածքում տարիների ընթացքում կուտակված աղբը, նստվածքները, բուսածածկը և այլ խոչընդոտներ զգալիորեն նվազեցրել են ջրատարների թողունակությունը, ինչի հետևանքով առաջանում են ջրալցումներ, սելավներ և ճանապարհների ու տնամերձ տարածքների վնասներ:

Չնայած որ համայնքի մեծահասակների առօրյա գործերին, ծրագրի նպատակն է նաև մարդկանց ֆիզիկական ակտիվացման ուղղված միջոցառումներ անել:

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- վերականգնել ջրատարների բնականոն աշխատանքը,
- կանխել սելավների և ջրհեղեղների ռիսկերը,
- բարելավել բնակչության անվտանգությունն ու առողջապահական պայմանները,
- նպաստել շրջակա միջավայրի մաքրմանը և կայուն կառավարմանը,

Առողջապահական ոլորտում նախատեսվում է իրականացնել մեծահասակների ֆիզիկական ակտիվությանը նպաստող ծրագիր:

Տաշիր համայնքում և հարակից բնակավայրերում բնակվող թոշակառուների զգալի մասը վարում է նստակյաց կենսակերպ, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց ֆիզիկական առողջության, շարժունակության, հոգեբանական վիճակի և սոցիալական ակտիվության վրա: Տարեցների համար սահմանափակ են կանոնավոր և կազմակերպված ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու հնարավորությունները, ինչպես նաև մասնագիտական ուղեկցությամբ առողջարար մարզումների հասանելիությունը: Արդյունքում մեծանում են տարիքային հիվանդությունների, մեկուսացման և կյանքի որակի նվազման ռիսկերը:

Ծրագրի նպատակն է նպաստել թոշակառուների առողջ և ակտիվ կենսակերպի ձևավորմանը՝ նրանց համար կազմակերպելով կանոնավոր ֆիզիկական ակտիվության պարապմունքներ մարզիչի ղեկավարությամբ և հատուկ նախատեսված մարզասարքերի օգտագործմամբ: Ծրագիրը հնարավորություն կտա տարեցներին բարելավել ֆիզիկական վիճակը, բարձրացնել շարժունակությունը, ամրապնդել առողջությունը, ձեռք բերել նոր սոցիալական կապեր և ակտիվորեն մասնակցել համայնքային կյանքին: Նախաձեռնությունը կնպաստի նաև ակտիվ ծերացման մշակույթի տարածմանը, տարեցների ինքնավստահության բարձրացմանը և նրանց կյանքի որակի բարելավմանը:

2. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի առաջին մասով դիտարկենք Մեծավան բնակավայրում ջրատար համակարգերի հարցը, որոնք տարիների ընթացքում ենթարկվել է զգալի մաշվածության և խցանման՝ պայմանավորված ինչպես բնական, այնպես էլ մարդկային գործոններով: Տեղումների, ձնհալքի և հողի տեղաշարժերի հետևանքով ջրատարներում կուտակվել են տիղմ, քարեր, բուսական զանգված և կենցաղային աղբ, ինչը էապես նվազեցրել է դրանց թողունակությունը: Արդյունքում՝ նույնիսկ միջին ինտենսիվության տեղումների ժամանակ առաջանում են ջրի կուտակումներ, որոնք վերածվում են սելավների՝ վնասելով ճանապարհները, ենթակառուցվածքները և երբեմն նաև բնակելի տարածքները:

Ծրագիրը նպատակ ունի լուծելու մի շարք փոխկապակցված խնդիրներ, որոնք ունեն ինչպես ինժեներական, այնպես էլ սոցիալ-բնապահպանական բնույթ:

Առաջին կարևոր խնդիրը ջրատարների ֆիզիկական խցանումների վերացումն է: Այս խնդիրը ներառում է կուտակված նստվածքների, աղբի և բուսածածկի հեռացում, որոնք խոչընդոտում են ջրի ազատ հոսքին: Առանց այս խոչընդոտների վերացման հնարավոր չէ ապահովել ջրահեռացման համակարգի արդյունավետ աշխատանքը:

Երկրորդ խնդիրը սելավների և ջրհեղեղների ռիսկերի նվազեցումն է: Մեծավանում, հատկապես գարնանային ձնհալքի և առատ տեղումների շրջանում, հաճախակի են դառնում ջրի հոսքի անկառավարելի դրսևորումները:

Խցանված ջրատարները չեն կարողանում ընդունել և հեռացնել ջրի մեծ ծավալները, ինչի հետևանքով ջուրը դուրս է գալիս իր բնական հունից և տարածվում բնակավայրում: Սա վտանգում է ինչպես բնակչության անվտանգությունը, այնպես էլ համայնքային գույքը:

Երրորդ կարևոր խնդիրը ճանապարհների և ենթակառուցվածքների պաշտպանությունն է: Ջրի անկանոն հոսքը հանգեցնում է ճանապարհների քայքայման, փոսերի առաջացման, ինչպես նաև ջրագծերի և այլ ենթակառուցվածքների վնասման: Այս երևույթները ոչ միայն ֆինանսական լրացուցիչ բեռ են առաջացնում համայնքի համար, այլև խաթարում են բնակչության բնականոն տեղաշարժը և տնտեսական ակտիվությունը:

Ծրագիրը ուղղված է նաև ջրատարների երկարաժամկետ արդյունավետ շահագործման ապահովմանը: Սա ենթադրում է ոչ միայն մեկանգամյա մաքրում, այլև համակարգված մոտեցում՝ պարբերական սպասարկման, վերահսկողության և ռիսկերի կառավարման միջոցով:

Տաշիր համայնքում և դրա կազմում ընդգրկված բնակավայրերում բնակվող թոշակառուների զգալի մասը չունի կանոնավոր ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու հնարավորություն: Տարիքային փոփոխությունների, քրոնիկական հիվանդությունների, սահմանափակ շարժունակության և սոցիալական մեկուսացման հետևանքով տարեցների շրջանում աճում են սրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, հենաշարժողական համակարգի խնդիրների, ավելորդ քաշի և հոգեբանական լարվածության դեպքերը, բազմաբնակարան շենքերում ապրողները շատ պասիվ ֆիզիկական կյանք են վարում, որը մեր համայնքի դեպքում լավագույն դեպքում կազմված է տուն-աշխատանքի-խանութ-տուն օղակից: Միաժամանակ, համայնքում բացակայում են հատուկ տարեցների համար նախատեսված կանոնավոր առողջարար մարզումների ծրագրերը, որոնք իրականացվում են մասնագետ մարզիչների հսկողությամբ:

Ծրագրի հիմնական խնդիրն է հաղթահարել թոշակառուների ֆիզիկական պասիվությունը, նպաստել նրանց առողջության պահպանմանը և բարելավմանը, ինչպես նաև ստեղծել պայմաններ ակտիվ և արժանապատիվ ծերացման համար: Ծրագրի միջոցով տարեցներին հնարավորություն կընձեռվի մասնակցել անվտանգ, հասանելի և իրենց տարիքային առանձնահատկություններին համապատասխան ֆիզիկական ակտիվության պարապմունքների, որը կվարի համայնքային ՀՈԱԿ-ում աշխատող մարզիչը: Մարզիչը այժմ աշխատում է տարբեր տարիքային խմբերի հետ՝ կազմակերպելով մարզումներ նստակյաց աշխատանք ունեցողների և տնային տնտեսուհիների համար:

3. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին մասով Մեծավան բնակավայրի ջրատարների մաքրման ծրագիրը նախատեսում է համակարգված և փուլային մոտեցում, որի շրջանակում յուրաքանչյուր միջոցառում ուղղված է ոչ միայն առկա խնդիրների վերացմանը, այլև դրանց կրկնության կանխարգելմանը: Միջոցառումները կառուցված են ըստ առաջնահերթության՝ հաշվի առնելով ռիսկերի մակարդակը, բնակչության վրա ազդեցությունը և ենթակառուցվածքների պահպանման կարևորությունը:

Ծրագրի առաջին և հիմնարար փուլում իրականացվելու են անմիջական մաքրման աշխատանքները: Դրանք ներառում են ջրատարներից կուտակված բերվածքի՝ աղբի, տիղմի, քարերի և բուսական զանգվածի հեռացում: Առաջնահերթ կմաքրվեն այն հատվածները, որոնք ունեն անմիջական վտանգ բնակչության համար կամ կարող են առաջացնել սելավային հոսքեր: Կարևոր է տեխնիկական միջոցների ներգրավումը: Ջրատարների խորացման, լայնացման և դժվար հասանելի հատվածների մաքրման համար օգտագործվելու են տեխնիկական միջոցներ՝ էքսկավատորներ, մեխանիզմ և այլ մասնագիտացված տեխնիկա: Տեխնիկական միջոցների կիրառումը մեծացնում է աշխատանքների արդյունավետությունը և կրճատում իրականացման ժամկետները:

Երկրորդ փուլում նախատեսվում է բերվածքի բարձումը և տեղափոխումը: Շատ կարևոր է, որ մաքրման արդյունքում դուրս բերված բերվածքը չդառնա նոր աղտոտման աղբյուր:

Մաքրման աշխատանքներից հետո իրականացվելու են պարբերական ստուգումներ: Անհրաժեշտության դեպքում համայնքը կիրականացնի լրացուցիչ միջամտություններ:

Ծրագրում ներառվում է նաև իրազեկման բաղադրիչ: Բնակիչների շրջանում կիրականացվեն տեղեկատվական աշխատանքներ՝ ուղղված ջրատարների պահպանմանը, աղբի ճիշտ կառավարմանը և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորմանը: Այս միջոցառումը կարևոր է ծրագրի արդյունքների երկարաժամկետ պահպանման տեսանկյունից:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և շահագործել բացօթյա տեղադրվող մարզասարք (բազմաֆունկցիոնալ մարզասարք, որն իր մեջ միավորում է մի քանի օգտակար սպորտային սարքավորումներ՝ պտտաձող, զուգափայտ, հենակներ՝ հրումներ կատարելու համար, որովայնի մարզման համար ձողեր), որոնք նախատեսված են մեծահասակների և տարեցների ֆիզիկական ակտիվության համար: Հավելենք, որ բացօթյա մարզահրապարակում այս պահին կա տեղադրված 8 մարզասարք:
Այնուհետև սոց. հարթակների և համայնքի ակտիվ երիտասարդների ակտիվ մասնակցությամբ իրականացվելու է իրազեկման միջոցառումներ, որի միջոցով բնակիչները կտեղեկանան ծրագրին: Անհրաժեշտության դեպքում ներգրավելու է նաև հիվանդանոցը, որը ևս կարող է իրազեկել բնակիչներին:

Մասնակիցներ ներգրավելուց հետո մարզիչը կմշակի տարիքային խմբի առանձնահատկություններին համապատասխան մարզումների ծրագիր և կանցկացնի կանոնավոր խմբային պարապմունքներ (10-15 մասնակից):

Պարապմունքները կանցկացվեն խմբային սկզբունքով հաշվի առնելով յուրաքանչյուրի հետ անհատական աշխատանքը:

Առաջնահերթություն է տրվելու սոցիալապես խոցելի, միայնակ ապրող, սահմանափակ սոցիալական շփումներ ունեցող և առողջական խնդիրներ ունեցող թոշակառուների ներգրավմանը: Հատուկ ուշադրություն կդարձվի կանանց, միայնակ տարեցների մասնակցության ապահովմանը:

4. ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ (ԸՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Աշխատանքների նախահաշվային արժեքը կլինի հետևյալը.

	Բնապահպանական ծրագրի բյուջե				
Հ/Հ	**Հաշվարկի և նախահաշվարկի անվանումը**	**Չափման միավորը**	**Քանակը**	**Միավորի գինը, ՀՀ դրամ**	**Ընդհանուր գինը, ՀՀ դրամ**
1	Բերվածքի քանդում բաց հատվածներում, մեխանիզմով	խմ	1300	750	975000
2	Սելավատարի մեջի բերվածքների բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 խմ	1.3	170000	221000
3	Բաց բերվածքների տեղափոխում ինքնաթափով, 3-5 կմ	տ	1300	545	708500
	Ընդամենը, շին. աշխ				1904500
	Առողջապահական ծրագրի բյուջե				
Հ/Հ	**Հաշվարկի և նախահաշվարկի անվանումը**	**Չափման միավորը**	**Քանակը**	**Միավորի գինը, ՀՀ դրամ**	**Ընդհանուր գինը, ՀՀ դրամ**
1	Մարզասարքի ձեռքբերում	հատ	1	220400	220400
	Ընդամենը, մարզասարք				220400
	Ընդամենը				2124900

Ծրագրի շրջանակում լրացուցիչ ծախսերի առաջացման դեպքում, համայնքն իր միջոցներից կիրականացնի ֆինանսավորում՝ ծրագրի ամբողջական իրականացման համար:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2027-ի հունվար-օգոստոս ամիսներին:

Բնապահպանական ծրագրով համայնքին տրվող գումարը 2124900 դրամ է:

5. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեծավան բնակավայրում ջրատարների մաքրման ծրագրի մշակումը պայմանավորված է մի շարք հիմնախնդիրներով, որոնք տարիների ընթացքում ձևավորել են բարդ իրավիճակ:

Առաջին խնդիրը ջրատարների համակարգի ֆիզիկական խցանումն է: Տարածքում երկար ժամանակ չի իրականացվել համակարգված մաքրում, ինչի հետևանքով ջրատարներում կուտակվել են տիղմ, քարեր, չորացած բուսականություն և կենցաղային աղբ: Այս ամենը զգալիորեն նվազեցրել է ջրի հոսքի արագությունն ու թողունակությունը՝ խաթարելով համակարգի բնականոն աշխատանքը:

Երկրորդ կարևոր հիմնախնդիրը կապված է կլիմայական և սեզոնային գործոնների հետ: Գարնանային ձնհալքը և առատ տեղումները հաճախ առաջացնում են ջրի մեծ հոսքեր, որոնք խցանված ջրատարների պայմաններում չեն կարողանում ժամանակին հեռացվել: Արդյունքում ձևավորվում են սելավային իրավիճակներ, որոնք սպառնում են ինչպես բնակչությանը, այնպես էլ համայնքային ենթակառուցվածքներին:

Առկա խնդիրները ունեն նաև տնտեսական հետևանքներ: Ճանապարհների վնասումը, ենթակառուցվածքների վերանորոգման անհրաժեշտությունը և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը լրացուցիչ ֆինանսական բեռ են ստեղծում համայնքի համար: 2024-ի հեղեղումների հետևանքով Մեծավանում գյուղատնտեսական հողերի վնասը կազմել էր 196,7 հա:

Ծրագրի մշակման հիմքում ընկած են համայնքում առկա մի շարք առողջապահական և սոցիալական մարտահրավերներ: Վերջին տարիներին նկատվում է տարեց բնակչության թվի աճ, մինչդեռ նրանց համար առողջ ապրելակերպի խթանման ծրագրերը սահմանափակ են, չնայած պետությունը վերջին տարիներին տարեցների ֆիզիկական ակտիվության բարձրացման միջոցառումներ է անում, մարզային շատ քիչ համայնքներ են ակտիվորեն մասնակցում: Համայնքային հանդիպումների և բնակիչների հետ քննարկումների ընթացքում հաճախ բարձրացվել է ժամանցի և տարեցների սոցիալական ներգրավվածության ապահովման անհրաժեշտությունը:

Առկա են նաև առողջապահական խնդիրներ՝ կապված հիպերտոնիայի, սրտանոթային հիվանդությունների, հենաշարժողական համակարգի խանգարումների, շաքարային դիաբետի և նստակյաց կենսակերպի հետ: Այս խնդիրները ոչ միայն ազդում են մարդկանց առողջության վրա, այլ նաև մեծացնում են առողջապահական ծառայությունների նկատմամբ պահանջարկը և սոցիալական աջակցության կարիքը: Վերոնշյալ հանգամանքները համայնքներին ստիպում են ո՛չ միայն միջոցառումներ իրականացնել երիտասարդների համար, այլև այս պրոցեսներում փորձել ներգրավել համայնքի թոշակառու բնակչությանը:

6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեծավան բնակավայրում ջրատարների վիճակը անմիջական ազդեցություն ունի ոչ միայն տվյալ բնակավայրի, այլև հարակից բնակավայրերի և ամբողջ համայնքի կենսագործունեության վրա, քանի որ այս բնակավայրի տարածքից են սկիզբ առնում համայնքի մի շարք խոշոր գետեր, գետակներ՝ հոսելով ամբողջ տարածքում Ջրատարների համակարգը հանդիսանում է կարևոր ենթակառուցվածք, որը ապահովում է տեղումների և ձնհալքի արդյունքում առաջացող ջրերի անվտանգ հեռացումը: Դրա խափանումը բերում է շղթայական բացասական հետևանքների:

Ազդակիր բնակավայրերում հիմնական բնապահպանական խնդիրներից մեկը ջրատարների խցանման հետևանքով առաջացող ջրալցումներն են: Տեղումների կամ ձնհալքի ժամանակ ջուրը, չգտնելով իր բնական հոսքի ուղին, կուտակվում է բնակելի և գյուղատնտեսական տարածքներում՝ առաջացնելով հողի էրոզիա, բերրի շերտի լվացում և կանաչ տարածքների վնասում (Նմանատիպ օրնակը եղել էր 2024թ.-ին գարնանային վարարումների ժամանակ, գյուղատնտեսական հեղեղված հողերի մակերեսը Մեծավան բնակավայրի տարածքում կազմել են շուրջ 196,7 հա): Այս երևույթները երկարաժամկետ կտրվածքով կարող են հանգեցնել հողերի դեգրադացիայի և կենսաբազմազանության նվազման:

Առողջապահական տեսանկյունից խնդիրը ոչ պակաս կարևոր է: Կանգնած ջուրը և կուտակված աղբը նպաստում են վնասակար միկրոօրգանիզմների, միջատների և կրծողների բազմացմանը, որոնք կարող են հանդիսանալ վարակիչ հիվանդությունների տարածման աղբյուր: Հատկապես ռիսկային են երեխաները և տարեցները, որոնց առողջությունը առավել խոցելի է նման պայմաններում: Բացի այդ, խոնավ միջավայրի երկարատև ազդեցությունը կարող է նպաստել շնչառական և ալերգիկ հիվանդությունների աճին:

Այսպիսով, Մեծավան բնակավայրի ջրատարների մաքրման խնդիրը ունի լայն ազդեցության շրջանակ՝ ընդգրկելով բնապահպանական և առողջապահական մի շարք կարևոր ուղղություններ, որոնք փոխկապակցված են և պահանջում են համալիր լուծում:

Կարևոր է նշել, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես է Հայաստանում, մարդկանց կյանքի որակի փոփոխությունը և աշխատանքի բնույթը ստեղծել են նստակյաց կյանքով ապրող հասարակության մի ստվար զանգված: Երևանում շատ են մարզասրահները, բայց մայրաքաղաքից դուրս, հատկապես փոքր համայնքներում, որտեղ քիչ են մարզասրահները, բնակիչների համար հնարավորությունները կրճատվում են՝ զրկելով նրանց իրենց ֆիզիկական ակտիվության միջոցառումների հնարավորություններից, ուստի համայնքը, հաշվի առնելով վերոգրյալը, պետք է ապահովի բնակիչների այս ոլորտի խնդիրների լուծումը՝ նպաստելով կյանքի որակի բարելավմանը նաև այս ոլորտում: Ծրագրի ազդեցության գոտին ընդգրկում է Տաշիր համայնքը: Բնակավայրերում տարեց բնակչության մասնաբաժինը համեմատաբար բարձր է, իսկ առողջարար և մարզական ծառայությունների հասանելիությունը՝ սահմանափակ: Կարևոր է նշել, որ շատ են նաև միայնակ ապրող թոշակառուները, որոնք այլ զբաղմունք չունեն, բացի հեռուստացույց, սոց. ցանցեր նայելուց, որոնք երկուսն էլ որևէ ձևով ֆիզ. ակտիվությանը չեն նպաստում:

Հիմնական առողջապահական խնդիրներն են սրտանոթային հիվանդությունները, արյան բարձր ճնշումը, հենաշարժողական համակարգի հիվանդությունները, շաքարային դիաբետը, ավելորդ քաշը, ինչպես նաև տարեցների շրջանում տարածված միայնությունը և սոցիալական մեկուսացումը: Ծրագիրը միտված է հենց այս խնդիրների կանխարգելմանն ու մեղմացմանը՝ համայնքային մակարդակում ստեղծելով առողջ ապրելակերպի խթանման կայուն համակարգ:

7. ԿԱՊԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱԳՐԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Մեծավան բնակավայրի ջրատարների մաքրման ծրագիրը սերտորեն համահունչ է Լոռու մարզի և Տաշիր համայնքի զարգացման ռազմավարական առաջնահերթություններին: Այն ուղղված է համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և բնակչության կյանքի որակի բարձրացմանը, որոնք հանդիսանում են տեղական զարգացման հիմնական ուղղություններ:

Ծրագիրը ներդաշնակվում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի հետ, որտեղ ընդգծվում է ինժեներական ենթակառուցվածքների արդիականացման և աղետների ռիսկերի նվազեցման կարևորությունը: Ջրատարների մաքրումը դիտարկվում է որպես կանխարգելիչ միջոցառում, որը նվազեցնում է արտակարգ իրավիճակների հավանականությունը և նպաստում է համայնքի կայուն զարգացմանը:

Միևնույն ժամանակ, ծրագիրը համահունչ է շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերին, քանի որ այն ուղղված է բնական ռեսուրսների պահպանմանը, աղտոտման նվազեցմանը և էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Ջրատարների մաքրումը նպաստում է նաև ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և հողի պահպանությանը:

Ծրագրի մշակումը նաև հիմնված է համայնքի կողմից բարձրացված առաջնահերթ խնդիրների վրա: Բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բազմիցս բարձրացվել է ջրատարների խցանման, սելավների և հակասանիտարական պայմանների խնդիրը, ինչը վկայում է ծրագրի բարձր արդիականության և անհրաժեշտության մասին:

Կարևոր է նաև ծրագրի կապը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների հետ: Մասնավորապես՝

- այն նպաստում է մաքուր ջրի և սանիտարիայի ապահովմանը (Նպատակ 6)՝ բարելավելով ջրահեռացման համակարգը,
- աջակցում է կայուն համայնքների ձևավորմանը (Նպատակ 11)՝ բարձրացնելով բնակավայրի դիմակայունությունը բնական աղետների նկատմամբ,
- նպաստում է առողջ կյանքի և բարեկեցության ապահովմանը (Նպատակ 3)՝ նվազեցնելով առողջապահական ռիսկերը,
- աջակցում է կլիմայական փոփոխությունների ազդեցությունների մեղմմանը (Նպատակ 13)՝ կանխարգելելով սելավների և ջրհեղեղների հետևանքները:

Մեծահասակների ֆիզիկական ակտիվության ծրագիրը համահունչ է Լոռու մարզի և համայնքի զարգացման ռազմավարական առաջնահերթություններին, որոնք ուղղված են բնակչության առողջության բարելավմանը, առողջ և ակտիվ կենսակերպի խթանմանը, սոցիալական ներառմանը և կյանքի որակի բարձրացմանը:

Ծրագիրը նպաստում է համայնքի առողջապահական և սոցիալական զարգացման նպատակների իրականացմանը՝ մեծահասակների համար ստեղծելով ֆիզիկական ակտիվության մատչելի հնարավորություններ: Այն նաև նպաստում է տարբեր տարիքային խմբերի սոցիալական ներգրավվածությանը, ակտիվ ծերացմանը և համայնքային համերաշխության ամրապնդմանը:

Ծրագիրը կապ ունի շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների հետ, քանի որ խթանում է բացօթյա ֆիզիկական ակտիվությունը և հանրային տարածքների արդյունավետ օգտագործումը: Սա նպաստում է բնապահպանական գիտակցության բարձրացմանը, առողջ կենսամիջավայրի ձևավորմանը և բնակիչների ու բնական միջավայրի միջև կապի ամրապնդմանը:

Ծրագիրը համահունչ է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, մասնավորապես՝

- ԿԶՆ 3 – «Լավ առողջություն և բարեկեցություն»՝ նպաստելով առողջ ապրելակերպի տարածմանը, ֆիզիկական ակտիվության բարձրացմանը և հիվանդությունների կանխարգելմանը,
- ԿԶՆ 10 – «Անհավասարությունների կրճատում»՝ ապահովելով տարբեր սոցիալական և տարիքային խմբերի հավասար մասնակցությունը ծրագրային միջոցառումներին,
- ԿԶՆ 11 – «Կայուն քաղաքներ և համայնքներ»՝ խրախուսելով անվտանգ, առողջ և ներառական հանրային տարածքների օգտագործումը,

8.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն փաստը, որ ծրագիրը իրականացվում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը՝ ծրագիրը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված Տաշիր համայնքի զարգացման և շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի հիման վրա: Ծրագրի իրականացման ժամանակ ընդունվել է ՀՀ ՇՄՆ և ԱՆ կողմից արված առաջարկները և նախարարությունների կողմից սահմանված առաջնահերթությունները: Ծրագրի շրջանակներում մասնակից կողմեր են հանդիսանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ որպես ֆինանսավորող ու իրականացնող, իսկ շահառուներ են դիտարկվում համայնքի բնակիչները:

9. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրը գտնվում է Լոռու մարզի հյուսիսում,սահմանակից է Վրաստանի հանրապետությանը: Այս պահին Մեծավանում կա 5883 բնակիչ, որից 251-ը Արցախից բռնի տեղահանված բնակիչներն են: Բնակավայրը ունի 2 դպրոց, մեկ մանկապարտեզ, մեկ մշակույթի տուն, արվեստի դպրոց:

Մեծավան բնակավայրի ջրատարների մաքրման ծրագիրը ուղղված է լայն շրջանակի շահառուների կարիքների բավարարմանը՝ ընդգրկելով ինչպես անմիջական, այնպես էլ անուղղակի շահառուներ: Ծրագրի հիմնական անմիջական շահառուները Մեծավան բնակավայրի բնակիչներն են, որոնց առօրյա կյանքը անմիջապես կախված է ջրատարների համակարգի արդյունավետ աշխատանքից: Մաքրված և գործունակ ջրահեռացման համակարգը կնպաստի նրանց անվտանգության բարձրացմանը, կկանխի ջրի կուտակումները բնակելի տարածքներում և կնվազեցնի գյուղատնտեսական հողերի վնասների ռիսկը:

Անուղղակի շահառուների շարքին են պատկանում հարակից բնակավայրերի բնակիչները, ովքեր նույնպես կարող են տուժել սելավներից կամ ջրի անկառավարելի հոսքերից: Բացի այդ, ծրագրից շահում են համայնքում գործող տնտեսվարողները, գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք և ծառայություններ մատուցող կազմակերպությունները, քանի որ բարելավված ենթակառուցվածքները նպաստում են տնտեսական գործունեության կայունությանը:

Բացի այդ, ծրագրի շահառու է ամբողջ համայնքը՝ որպես սոցիալ-բնապահպանական համակարգ: Մաքուր և կարգավորված միջավայրը բարելավում է կյանքի որակը, բարձրացնում բնակավայրի գրավչությունը և ձևավորում ավելի պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:

Ծրագրի անմիջական շահառուները կլինեն Տաշիր համայնքի թոշակառուները և 60 տարեկանից բարձր բնակիչները:: Նախատեսվում է ծրագրում ներգրավել 45-50 տարեցների, որոնք պարբերաբար կմասնակցեն մարզումներին և առողջապահական միջոցառումներին:

Նաև վստահ ենք, որ ֆիզիկապես ակտիվ տարեցները ավելի ակտիվ մասնակցում են համայնքային կյանքին:

10. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Ծրագրի երկու փուլերի իրականացումը նախատեսվում է կազմակերպել Տաշիր համայնքի ղեկավարության և համապատասխան մասնագիտական ստորաբաժանումների կողմից՝ ապահովելով արդյունավետ կառավարում և

վերահսկողություն: Կատարողական գործընթացը հիմնվելու է հստակ պլանավորման, փուլային իրականացման և շարունակական վերահսկողության վրա:

Սկզբնական փուլում կձևավորվի աշխատանքային խումբ, որը կներառի տեխնիկական մասնագետներ, ինժեներներ և համայնքային ծառայությունների ներկայացուցիչներ: Այս խումբը պատասխանատու կլինի ծրագրի մանրամասն պլանավորման, ռեսուրսների բաշխման և աշխատանքների համակարգման համար:

Կատարողականի կարևոր բաղադրիչ է վերահսկողությունը: Յուրաքանչյուր փուլում կիրականացվի կատարված աշխատանքների գնահատում՝ ապահովելու համար, որ դրանք համապատասխանում են սահմանված չափանիշներին: Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև մշտադիտարկման համակարգ, որը կօգնի պահպանել ձեռք բերված արդյունքները և կանխել նոր խնդիրների առաջացումը:

Բացի այդ, ծրագրի շրջանակում խրախուսվելու է համայնքային մասնակցությունը: Բնակիչների ներգրավումը ոչ միայն կնպաստի աշխատանքների արդյունավետությանը, այլև կուժեղացնի պատասխանատվության զգացումը ջրատարների պահպանման հարցում:

Ծրագրի ավարտին ակնկալվում է, որ մասնակիցների մեծ մասը կձևավորի կանոնավոր ֆիզիկական ակտիվության սովորույթներ: Կավելանա նրանց մասնակցությունը համայնքային կյանքին, կբարելավվեն ֆիզիկական ցուցանիշները, շարժունակությունը և ընդհանուր առողջական վիճակը: Ծրագրի շրջանակներում ստեղծված մարզումների համակարգը հնարավորություն կտա շարունակել նախաձեռնությունը նաև ծրագրի ավարտից հետո:

Կանխատեսվում է, որ ծրագրի արդյունավետ իրականացումը կհանգեցնի տարեցների շրջանում առողջ ապրելակերպի մշակույթի տարածմանը և համայնքում նմանատիպ նախաձեռնությունների պահանջարկի աճին:

11. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից ակնկալվում են շոշափելի և երկարաժամկետ արդյունքներ, որոնք կանդրադառնան ինչպես ենթակառուցվածքների վիճակի, այնպես էլ բնակչության կյանքի որակի վրա:

Առաջին մասով հիմնական արդյունքը կլինի մաքրված և լիարժեք գործող ջրատարների համակարգը: Ջրի հոսքը կվերականգնվի, ինչը կկանխի ջրալցումները և կնվազեցնի սելավների առաջացման հավանականությունը: Սա կբարձրացնի բնակչության անվտանգությունը և կնվազեցնի արտակարգ իրավիճակների ռիսկերը:

Երկրորդ կարևոր արդյունքը ճանապարհների և այլ ենթակառուցվածքների պահպանությունն է: Ջրի անկառավարելի հոսքի բացակայությունը կնվազեցնի ճանապարհների քայքայումը, կբարելավի երթևեկության պայմանները և կնպաստի համայնքի տնտեսական ակտիվության աճին:

Երրորդ արդյունքը վերաբերում է շրջակա միջավայրի բարելավմանը: Ջրատարների մաքրումը կնվազեցնի աղտոտվածությունը, կբարելավի սանիտարահիգիենիկ վիճակը և կնպաստի առողջ միջավայրի ձևավորմանը: Սա իր հերթին դրական ազդեցություն կունենա բնակչության առողջության վրա:

Չորրորդ արդյունքը բնակչության իրազեկվածության և պատասխանատվության բարձրացումն է: Ծրագրի ընթացքում իրականացվող տեղեկատվական աշխատանքները կնպաստեն շրջակա միջավայրի պահպանության մշակույթի ձևավորմանը, ինչը կարևոր է երկարաժամկետ կայունության ապահովման համար:

Վերջապես, ծրագիրը կնպաստի համայնքի դիմակայունության բարձրացմանը բնական երևույթների նկատմամբ: Մաքրված և սպասարկվող ջրատարները կդառնան արդյունավետ պաշտպանական միջոց սելավների և ջրհեղեղների դեմ՝ ապահովելով համայնքի կայուն և անվտանգ զարգացումը:

Երկրորդ մասով, սա կլինի առողջապահական նմանատիպ առաջին միջոցառումը համայնքում:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

1. Մեծահասակների շրջանում կբարձրանա ֆիզիկական ակտիվության մակարդակը և առողջ ապրելակերպի վերաբերյալ գիտելիքներն ու հմտությունները:
2. Կնվազեն նստակյաց կենսակերպի և ոչ վարակիչ հիվանդությունների (սրտանոթային հիվանդություններ, շաքարային դիաբետ, գիրություն և այլն) ռիսկային գործոնները:
3. Կուժեղանա համայնքի բնակիչների սոցիալական ներգրավվածությունը, կստեղծվեն նոր շփումներ և կխթանվի համայնքային համախմբվածությունը:
4. Կավելանա տարեցների մասնակցությունը համայնքային կյանքին և առողջապահական նախաձեռնություններին:
5. Բնակիչների շրջանում կբարձրանա շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը՝ խրախուսելով բացօթյա մարզումը:

6. Կստեղծվի ֆիզիկական ակտիվության կանոնավոր միջոցառումների կազմակերպման և շարունակական իրականացման համայնքային փորձ և մեխանիզմներ:
7. Կբարձրանա համայնքի կարողությունը՝ առողջ ապրելակերպի խթանման և բնակչության առողջության պահպանման ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

12. ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջոցառման անվանումը	Գումարը	Համամասնությունը, %
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	1904500 դրամ	89.6 %
Մեծավան բնակավայրի ջրատարների մաքրում	1904500 դրամ	89.6 %
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	220400 դրամ	10.4 %
Մեծահասակների մարզահրապարակի համար մարզասարքի ձեռքբերում	220400 դրամ	10.4 %
Ընդամենը	2124900 դրամ	100

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2026 թվականի N 62-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետով և հիմք ընդունելով «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2025 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-517-Ն օրենքի պահանջները

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների կառուցվածքը, քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N10-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N27-Ա որշման մեջ կատարել փոփոխություն և N2 հավելվածի «Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ» բաժնից հանել համար 1 տողը՝ համապատասխան « Գլխավոր մասնագետ /ՔԿԱԳ/ » , «1 » , «166580 » տվյալներով, իսկ նույն բաժնի «Ընդամենը» տողում «42 » թիվը փոխարինել «41» թվով :

Կողմ -11	Դեմ -0	Ձեռնպահ -4
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ		Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ		Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		Ի. ՏՈՄԵՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ		
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ		
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ		
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ		
Ա. ՍՈԼՈՅԱՆ		
Է. ՍՈՂՈՅԱՆ		
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ԱՐՇԱԿՅԱՆ

2026 հունիսի 24
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հունիսի 2026 թվականի N 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2026 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը՝ 14:30-ին;

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ԱՐՇԱԿՅԱՆ

2026 հունիսի 24
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2026 թվականի N 64-Ա

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ 1-ին մասի 42-րդ կետով, 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն ՍՊԸ-ի կողմից FAW մակնիշի (նույնականացման համար՝ LFNAHULJXTAB13103) տրանսպորտային միջոցը նվեր ընդունելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Վերը նշված ավտոմեքենաների ձևակերպման ծախսերը կատարել համայնքի բյուջեի հաշվին:

3. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ԱՐՇԱԿՅԱՆ

2026 հունիսի 24
ք. Տաշիր